

**«ՍԻՐՏ» ԲԱՐԱԴՐԻԶՈՎ «ՏԱՆՋԱՆՔ, ՏԽՐՈՒԹՅՈՒՆ,
ՎԻՇՏ» ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԴԱՇՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Լեզվում ոչինչ կատարելապես անշարժ չէ: Յուրաքանչյուր բառ, քերականական յուրաքանչյուր տարր, յուրաքանչյուր ոճ, հնչյուն ու հնչերանգ դանդաղ փոփոխվող փոխդասավորություն է՝ ձևավորված անտեսանելի և անդեմ մի հոսքով, որը լեզվի կյանքն է: Մշտական հոսքի հերակլիտյան այս հայեցակարգը լեզվում վերաբերում է առաջին հերթին իմաստաբանությանը, քանզի լեզվական բոլոր տարրերի մեջ հենց իմաստն է ենթակա ամենաշատ փոփոխությունների¹, ընդ որում, ժամանակի ընթացքում իմաստային փոփոխության են ենթարկվում ոչ միայն առանձին բառերը, այլ նաև ժողովրդախոսակցական լեզվում առաջ եկած և հետագայում վերացարկված բառակապակցությունները, որոնց վերաիմաստավորման արդյունքում առաջանում են ժողովրդի միտքն ավելի պատկերավոր արտահայտող, նրա խոսքին առավել կենդանություն, հյուսթեղություն ու հուզաարտահայտչականություն հաղորդող լեզվական միավորները՝ դարձվածքները: Կապակցության վերաիմաստավորումը կարող է տեղի ունենալ փոխաբերացմամբ, փոխանվանացմամբ, չափազանցությամբ, շրջասությամբ, համեմատությամբ և այլ ոճական հնարներով: Ընդ որում, հարկ է նշել, որ սրա արդյունքում կապակցությունը փոխադրվում է իմաստային մեկ այլ դաշտ: Լեզվաբանության մեջ իմաստային դաշտը տարբեր խոսքի մասերին պատկանող, սակայն մեկ հասկացություն արտահայտող բառերի ամբողջությունն է, և հենց այդ հասկացությունն էլ այդ բառերն ընդգրկում է տվյալ դաշտում²: Իմաստային դաշտերում կարող են ընդգրկվել նաև դարձվածքային միավորները, որոնք միավորվում են նշված դաշտերում ըստ իրենց բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստի՝ անկախ իրենց քերականական, կառուցվածքային, ոճական և այլ առանձնահատկությունների:

Սույն հոդվածի նպատակը «սիրտ» բաղադրիչով այն դարձվածքների վերլուծությունն ու զուգադրումն է, որոնք արտահայտում են «տանջանք, տխրություն, վիշտ» իմաստները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Հարկ է նշել՝ ինչպես իմաստային նրբերանգներով, այնպես էլ ոճական կիրառություններով, կառուցվածքային տիպերով և այլ առանձնահատկություններով ամենահարուստն ու ամենաբազմազանը հայերենի իմաստային դաշտն է:

¹ Ullman St., Semantics, Oxford, 1977, p. 141

² Вердиева З.Н., Семантические поля в современном английском языке, М., 1986, с. 4.

Իմաստաբային առումով այս դարչվածքների գլխավոր անդամը «սիրտ» բաղադրիչն է: Ըստ բաղադրիչների իմաստաբային միաշնչության աստիճանի, հիշյալ միավորները դարչվածքային սերտաճումներ ու միասնություններ են, – որ–է բաղադրիչ փոփոխելու (չհաշված դարչվածքային փարբերակները) կամ օտարելու դեպքում դարչվածքները կզրկվեն իրենց դարչվածքային իմաստից: Բերենք մի շարք դարչվածքներ:

Սիրտը երեւ (բրբ.) – Տանջել, տառապանք պատճառել: *Սիրտը էրում էին նաճակի տողերը* (ԹԵ, V, 51):

Սիրտը մխալ – Տես՝ Սիրտը երեւ: – *Այրված եմ, վարպետ, այրված եմ, – ասացի, – և այնպես, որ մինչև կյանքիս վերջն էլ մխալու է սիրտս* (ԲԱ, 317):

Սիրտը արյուն քամել, – Տանջվել, տառապել: *Վառ շողքերես ի՞նչ մնաց, Սիրտս արյուն է քամում* (ԻԵ, I, 237):

Սիրտս արյուն կաթեցնել, – Խիստ վշտացնել, տանջել: – *էդպես խոսքերով իմ սիրտս արին եք կաթացնում* (ՊՅ, 252):

Սիրտը մաշել/ մաշվել, – Վշտերից, հոգսերից տառապել: – *Ձուր սիրտդ մի՛ մաշիր, – ասում է պառավը, – միննույն է, էլ ոչ մի բան չի օգնի* (ԹԵ, V, 370):

Սիրտը կտոր– կտոր անել/ դառնալ/ լինել – Տանջվել, տառապել: – *Սխպեր, ես ու իմ աստվածը, սիրտս կտոր–կտոր էլավ, երբ ձեր բռնկիլը լսեցի* (ՊՅ, 41):

Սրտի վրա նստել – Տխրեցնել: *Վաղվան օրն էլ սև ամպի պես եկավ նստավ սրտիս վրա* (ԻԵ, I 131):

Սրտի վերք, – Հոգեկան ծանր վիշտ, տանջանք: *Սրտիս վերքը խորն է, մերիկ, Լավի դարձի հույս չկա* (ԻԵ, I, 81):

Սրտի ծերը մղկտալ, – Տանջվել, տառապել: *Սրտիս ծերը մղկտում ա, ոնց որ թե մարդու երեխեն թշնամու ձեռին քրքրելիս ըլեն...* (ԹԵ, V, 55):

Սրտի լարերը կտրել, – Խոր ցավ, վիշտ պատճառել, հոգեպես տանջել: *Սրտիս լարերն մեկ–մեկ կտրան, բլբուլներս ու ի՞ր գնացին* (ԻԵ, I, 119):

Սիրտը վառվել, – Սաստիկ վշտանալ, հուզվել, ցավ զգալ: *Սիրտս վառվավ սիրուդ բոցեն, Պապաբ – ծարավ էրվեցա* (ԻԵ, I, 18):

Սիրտը սև, – 1.Տխուր, 2.Ազավոր: *Աչիկներդ լիքն է արցունք, Սիրտներդ սև ու տխուր* (ԹԵ, III 93): *Դողում է պաղ նրա ձեռից Իմ սիրտը սև ու տխուր* (ԹԵ, III, 93):

Սիրտը կրծել, – Տանջել, մորմոքեցնել: *Նրան դեռևս անհասկանալի մի ախտ, որ շատ նման էր նախանձի, կրծում էր խղճալի պատանու սիրտը* (ԲԵ, III, 133):

Սիրտը այրել, – Վիրավորանք, վիշտ, ցավ պատճառել: *Ձգաց, որ իր մահը միայն կարող էր խլացնել այն կսկիծը, որ այրեց նրա սիրտը* (ԴՎ, 965):

Սիրտը խորով(վ)ել, – Տառապել, տանջվել: *Այդ խոսքերը կրակ դրած շշի նման խոցոտում, խորովում էին Նազելու սիրտը* (ԹԱ, 345):

Սիրտը արյուն լալ, – Սաստիկ կսկծալ, վշտանալ: *Իսկ երբ անունդ են տալիս, Սիրտս արյուն է լալիս* (ԻԵ, I, 317):

Սիրտը մղկտալ, – Տանջվել, մորմոքել, սիրտը ցավել: *Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝ մղկտում է սիրտս անվերջ քո թառանցից աղեկեզ* (ԹԵ, I, 269): Սրտներս մղկտում է,– գանգատվում էր ծերունին, խոր հառաչ արձակելով (ԹԱ, 504):

Սիրտը դառնությամբ լցվել / դառնանալ,– Վշտանալ, թախծել: *Բոլորը միախառնվելով լցրել էին նրա սիրտը աննկարագրելի դառնությամբ* (ՌԵ, IV, 374):

Սիրտը կրակ գցել – Ստատանքել, հուզել: *Քեզ ինչ ասեմ, որ դու սատանեն իմ մտքումս ծնացրիր, էս կրակն իմ սիրտս քցեցիր* (ՊՅ, 145):

Սրտին ցավ լինել – Ցավ, վիշտ ապրել: *Հայկը տեսնում է, որ առաջվա սերն ու համաձայնությունը վերացել է, սրտին ցավ շատ է լինում* (ԱԵ, 418):

Սրտին իջնել – Տանջվել, հուզել մեկին: *Թվում է, թե անտես մի ձեռք Ծանր, ինչպես ծուլված կապար, Սրտի՛ս, սրտի՛ս, սրտի՛ս իջել...* (ՍՊԵ, I, 257):

Սիրտը մրմռալ, – Տանջվել, տառապել: *Վարդանը նայեց նրա հետևից, և նրա սիրտը մրմռաց* (ԴՎ, 951):

Սիրտը կսկծալ,– Տանջվել, տառապել: *Այո՛, այո՛, վա՛յ, վա՛յ,– ասաց մեկը, որի սիրտը ամենից շատ էր կսկծում ցավից* (ԱԵ, 533):

Սիրտը դառնացնել (մեկի), – Մեկին տխրեցնել: *–ԱռՖի, գիտեմ, որ դու քո մոր պես թեթևամիտ չես, նրա համար, որ դու ուսում ունիս, գիտություն ունիս, խելք ունիս, ուրեմն հորդ խրատը չի դառնացնիլ քո սիրտը* (ՌԵ, III, 105):

Սիրտը տխրել, – Վշտանալ, տանջվել, ցավել մեկի/ մի բանի համար: *–Առանց քեզ, ա՛յն, իմ սիրտն է մրսում, Առանց ինձ չի՞ տխրում սրտիկդ* (ՍՊԵ, I, 127):

Սիրտը ուտել, – Տանջել, չարչարել, վշտացնել, տառապեցնել: *Մ՛նց կացա՛ն... Օրերս թրռան, ա՛նց կացա՛ն, Այն ու վախով դարդերով Սիրտս կերա՛ն, ա՛նց կացա՛ն* (ԹԵ, II, 7):

Սիրտը քրքրել, – Տանջել, խոր վիշտ պատճառել: *Մայրիկ հիվանդ եմ, սիրտս քրքրված. Տես ո՞րքան խորն են հոգուս վերքերը Արնոտ ու խոցոտ* (ԻԵ, I, 45):

Սիրտը տրոր(վ)ել, – Հոգեպես տանջ(վ)ել, ճնշ(վ)ել, մորմոք(վ)ել: *–Ով է իմ սիրտը տրորում անգութ, Սև մազերիս մեջ ճերմակ է հյուսում* (ԻԵ, I, 254):

Սիրտը արյուներ/ արյունոտվել, – Տանջվել, տառապել: *Բայց արյունոտվեց խեղճ սիրտս նորից, եվ որր մնացի և թափառական* (ԻԵ, I, 214):

Сердце разрывается (на части), – մեկը սգում է, տխրում, սիրտը կտոր – կտոր է լինում: *Глядя на неё, сердце разрывалось, бывало: щёку её ввалились, глаза впали, в лице был такой чахоточный цвет* (ԴՓԿ, 19).

Сердце ноет /щемит/ болит,–Սիրտը մղկտում է, ցավում է *Мучительное ощущение разрывало меня: мне было жалко его, сердце моё ныло и болело, когда я представляла как он бежит* (ԴՓՈ, 202).

Сердце/душа надывается (фолл).– Ինչ- որ մեկը տանջվում է, թախծում: *Он, кажется мигом всё понял и стоял передо мною бледный и так грустно глядел на меня, что во мне сердце надорвалось* (ԴՓՈ, 133).

Сердце кровью обливаётся, – Ինչ – որ մեկը տառապում, տանջվում է, սրտից արյուն է կաթում; *Сердце моё облилось кровью, пополз я по густой траве вдоль по оврагу* (АМГ, 12).

Надрывать сердце, – Հոգեկան տառապանքներ պատճառել:

А кобыленка эта, братцы, только сердце моё надрывает (ДФПР, 55).

Рвать/ разрывать сердце, – Սիրտը պատռել, տանջվել: *Там всё такое горе, что сердце пополам рвётся при одном воспоминании* (ДФУ, 8).

Сердце замирает, – Սիրտը կանգնում է ցավից, տառապանքից, տանջանքից: *Сердце замирало во мне и мучилось от беспредельной боли* (ДФУ, 416). *Сквозь какой- то тёмный вихрь, мерещились ему бледные лица, мучительно замирало сердце* (ТВД, 49).

A bleeding heart (բառացի արյունահոսող սիրտ), – Ցավով, տառապանքով լեցուն հոգի: *Batman, with a bleeding heart, exulted at the prospect of giving happiness to the two persons he loved best in the world at the cost of his own* (MWC, 181).

A heavy heart (բառացի ծանր սիրտ) – Տանջվող, տառապող հոգի: *With a heavy heart he considered also, that Brodie's anger might react upon Mary* (САН, 167).

Tear sb's heart (բառացի պատռել մեկի սիրտը) – Մեկին, տառապանք պատճառել: *It tears my heart just as my heart is torn when on certain night I watch the full moon shining on the lagoon from an unclouded sky* (MWC, 257).

Sb's heart bleeds (for sb.) – (բառացի մեկի սիրտը արյունահոսում է ինչ- որ մեկի համար) – Սիրտը ցավում է, տանջվում է մեկի համար: *As though her heart bled she took my hand, guided me to my knees, then got down heavily beside me, amidst the growing darkness of the room* (CAG, 35).

One's heart breaks, – (բառացի մեկի սիրտը կտրվում է), – Մեկը տխրում է, տանջվում: *And then her heart broke, and she was jealous, and angry, and the tears came and her heart would break* (ТМА, 96).

Heart breaking (բառացի սիրտ կտրող), – Տխուր, վշտալի: *You've no idea how heart – breaking it is for us who try to do things for children, to know that whatever we do is bound to be snowed under by the life they go to when school age ends* (GJS, 199).

Eat one's heart out (բառացի իր սիրտը ուտել դուրս) , – Լուռ տանջվել, թախծել: *By such a marriage you enter the camp which held your mother prisoner and wherein she ate her heart out* (GJL, 180).

Cry one's heart / eyes out (բառացի լաց լինել սիրտը / աչքերը դուրս) – Աղեկտուր լալ: *I threw myself on to the bed and cried my heart out* (BCJ, 80).

Այս իմաստային դաշտում տեղ են գտել նաև մի շարք այլ դարձվածքներ սիրտն արյունով լիքը / լցված – (տանջված, սգավոր), սիրտը տխուր (վշտոտ, տառապանքով լի) , սիրտը կրակ ընկնել/ դառնալ (մտատանջվել, սաստիկ ցավ զգալ), սիրտ(ը) կտրատել (վշտացնել, տանջել, հուզել), սիրտ մաշել / մաշեցնել(չարչարվել, տառապել, տանջ(վ)ել), սրտի ուրորը քանդել(մեծ ցավ

պատճառել), սիրտը սևանալ / սև կապել / հագնել (տխրել, սգալ, վիշտ ապրել), սրտի քիթը մղկտալ (սաստիկ ցավ զգալ), սրտի ճրագը մարել (մեծ վիշտ պատճառել), սրտի գդալը հալեցնել / մաշել (մեծ ցավ պատճառել), սրտին մանանեխ ցանել (վիշտ պատճառել, կսկծացնել), սրտում դժոխք վառել (չար-չարել, տանջել), սրտում դաղ մնալ (չարունակել տանջվել, կսկիծը չանցնել), սրտի տախտակը դաղել (սաստիկ ցավ պատճառել), սիրտն ու թոքը տրորել (բրբ.) (տանջել, տառապեցնել), սիրտ ուտող (տանջող, մաշող, չարչարող), սիրտը արյուն կապել, սրտից / սրտով սև արյուն գնալ, սրտից արյուն բերել (տանջել, խոր տառապանք պատճառել), как ножом по сердцу (ասես սիրտը դանակ խրեն), камень на сердцу / душе (ինչ – որ մեկը ծանր, ճնշող զգացողություն ունի), у меня что-л. на сердцу (տանջվել, ցավել մի բանի համար), ад кромешный на сердцу, (մեկը տանջվում, տառապում է), кошку скребучь на сердцу (մեկը տանջվում է), one's heart aches (սիրտը ցավում է), hope deferred maketh / makes the heart sick (ասացվ.) (բառացի՝ ուշացած հույսը տխրեցնում է սիրտը - երկար չիրականացող հույսը տխրեցնում է սիրտը և այլն):

Այս իմաստային դաշտի դարձվածքներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ իրենց արտահայտած ընդհանուր իմաստներով, այն է՝ «տանջանք, ցավ, տխրություն, վիշտ», նրանում ընդգրկված դարձվածքային միավորները համընկնում են դիտարկվող բոլոր լեզուներում: Այսպես, բոլոր երեք լեզուներում էլ առկա են թախծի ու տխրության, տանջանքի ու տառապանքի, ցավի ու վշտի, կսկծի ու սգո իմաստային նրբերանգները: Չնայած այս հանգամանքին՝ հայերենի և ռուսերենի դաշտերում տեղ են գտել նաև այնպիսի դարձվածքներ, որոնց արտահայտած նրբերանգները առկա են միայն տվյալ լեզվում կամ երկու լեզվում: Օրինակ՝ «զայրույթի» նրբիմաստը հանդիպում է միայն հայերենում և ռուսերենում, «ափսոսանքի», «հուսահատության» ու վիրավորանքի նրբերանգները՝ միայն հայերենում, իսկ «անհանգստության ու տագնապի» նրբիմաստը՝ միայն ռուսերենում:

Ինչպես արդեն նշել ենք, դարձվածքների գլխավոր անդամը իմաստային առումով «սիրտ» բաղադրիչն է, հետևաբար այն չի կարող օտարվել: Եվ իշտ է, ռուսերենի որոշ դարձվածքներում «սիրտ» բառին որպես տարբերակ օգտագործվում է նաև «душа» բառը, իսկ անգլերենի մեկ դարձվածքում «սիրտ» բառին որպես տարբերակ օգտագործվում է նաև «eye» (աչք) բաղադրիչը / cry one's heart/ eyes out (բառացի՝ լացել սիրտը / աչքերը դուրս - անմխիթար ողբալ, սգալ), սակայն հիշյալ տարբերակները գործածելիս, դարձվածքները չգրկվելով իրենց դարձվածքային իմաստից, այդուհանդերձ, կտեղափոխվեն իմաստային այլ՝ «հոգի» և «աչք» բաղադրիչները: Վարունակող դարձվածքների դաշտերը: Երկու, թերևս ավելի խոշոր իմաստային նրբերանգներ ևս նկատվում են բոլոր երեք լեզուներում: Դրանք սեփական զգացմունքների պատճառով «տխրելու, տանջվելու, տառապելու, ցավելու» և մեկին ինչ – որ

ծնով «տխրեցնելու, տանջելու, տառապանք ու ցավ պատճառելու» նրբիմաստներն են: Կարծում ենք, որ վերջիններս արդյունք են հիմնականում դարձվածքների բայական բաղադրիչների սեռախմաստային առանձնահատկությունների: Ի դեպ, վերջին երկու նրբիմաստներն ունեցող դարձվածքները կարելի է, կարծում ենք, համարել դարձվածքային հականիշներ (իրենց արտահայտած մեջ իմաստներով): Ուսումնասիրված դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Երեք լեզուների դարձվածքների ճնշող մեծամասնությունը բայական երկանդամ, եռանդամ դարձվածքներ են: Հայերենի դարձվածքների մեջ նկատվում են մաս հարադիր բարդություններ պարունակող դարձվածքներ սիրտը կտոր- կտոր անել / լինել, սիրտը պատառ- պատառ անել / լինել: Հանդիպում են մաս սակավաթիվ բառանդամ դարձվածքներ սիրտը յոթ պատառ դառնալ, սրտում խորը վերք ունենալ:

Հայերենի դաշտում տեղ են գտել մաս գոյականական, անձականական, մակբայական և հաղորդակցական մի քանի դարձվածք՝ սրտի վերք, սիրտը սև, սիրտը տխուր, սիրտը ուտող, ցավոք սրտի, ցավ ի սիրտ, դադված սրտով, սիրտն արյունով լիքը / լցված, սրտին դանակ զակես/ խփես / տաս՝ արյուն չի գա/ չի կաթի: Այս դաշտում տեղ են գտել մաս այնպիսի դարձվածքներ, որոնց կազմում օգտագործվում են մաս մարմնի այլ մասերի անվանումներ՝ սիրտն արյուն կաթեցնել, սիրտը արյուն լալ, սրտին դանակ խփես՝ արյուն չի գա, սիրտն արյունով լիքը, սրտով սև արյուն գնալ, սրտի քիթը մղկտալ, սիրտն ու թոքը մաշել, սիրտ ու թոքը տրորել: Բերված դարձվածքներից մի քանիսը չեն զրկվում իրենց դարձվածքային իմաստից, եթե այդ մարմնի մաս արտահայտող մյուս բաղադրիչն օտարենք. սակայն ձեռք են բերում այլ իմաստներ ու նրբիմաստներ, որ կարող են որոշ դեպքերում նրանց տեղափոխել մեկ այլ դաշտ (սրտով (սև) արյուն գնալ):

Մի շարք դարձվածքներում տեղ է գտել մաս «սև» բաղադրիչը (սիրտը սև, սիրտը սևանալ, սիրտը սև կապել / հագնել, սրտից / սրտով սև արյուն գնալ): Առաջին երկու դարձվածքներում «սև», «սևանալու» բաղադրիչն օտարելիս, բնական է, դարձվածքներն ընդհանրապես կվերանան, երրորդը կզրկվի ոչ միայն իր դարձվածքային, այլև ընդհանրապես որևէ իմաստից: Ինչ վերաբերում է վերջին դարձվածքին, ապա այստեղ «սև» բաղադրիչը ավելի է ընդգծում տանջանքն ու տառապանքը, և միանգամայն հնարավոր է այն օտարել:

Ռուսերենի դարձվածքներն էլ նույնպես մեծ մասամբ բայական են, բացի մեկ - երկու դարձվածքից՝ *нож в сердце, как ножом по сердце* (մակբայական), *ад кошмарный на сердце, камень на сердце*, (հաղորդակցական): Բայական դարձվածքները երկանդամ են, սակայն հանդիպում են մաս եռանդամները (*кошку скребут на сердце, уметь что-л. на сердце*): Միայն մեկ դարձվածքում է օգտագործված մաս մարմնի մեկ այլ՝ «արյուն» մասը, որը տվյալ դեպքում հնարավոր չէ օտարել կամ փոխել:

Անգլերենի դարձվածքների հիմնական մասը նույնպես բայական կառույցներ են՝ երկանդամ, եռանդամ (որոշ դեպքերում հաշվի չեն առնվում փոփոխական բաղադրիչները): Դարձվածքների մեջ համդիպում են նաև գոյականական (*a bleeding heart, a heavy heart*), ածականական (*heart – breaking*), հաղորդակցական (*hope deferred maketh / makes the heart sick*) կառույցներ: Այստեղ ևս միակ այլ մարմնի մասի անվանումը «արյուն» է, որը հնարավոր չէ օտարել (*a bleeding heart, make sb's heart bleed, sb's heart bleeds*):

Ուսումնասիրված դարձվածքներում գործում են քերականական տարբեր կարգեր՝ անվանական՝ առկայացման, հոլովի, թվի, ածականի համեմատության աստիճանների և բայական՝ դեմքի, թվի, եղանակի, ժամանակի, սեռի, հաստատական – ժխտականի: Քերականական կարգերից մի քանիսն ունեն իմաստազատիչ դեր, այսինքն՝ դարձվածքները կիմաստազորկվեն, եթե նրանց բաղադրիչները գործածվեն այլ կարգերով: Կան դարձվածքներ էլ, որոնցում հիշյալ քերականական կարգերը իմաստազատիչ դեր չունեն:

Եթե իմաստային առումով դարձվածքների գլխավոր անդամը «սիրտ» բաղադրիչն է, ապա շարահյուսության տեսակետից տարբերվում են ըստ կառուցվածքային տիպերի:

Տարբեր լեզուների դարձվածքներում բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություններն արտահայտվում են հիշյալ լեզուների տիպաբանական առանձնահատկություններով: Այսպես, եթե հայերենում նշված հարաբերություններն արտահայտվում են հոլովական վերջավորություններով, ապա ռուսերենում և անգլերենում դրանք արտահայտվում են նախդիրներով:

Երեք լեզուների դարձվածքների մեջ քիչ չեն բառային, քերականական, ռճական տարբերակները, օրինակ՝ սիրտը այրել / էրել (ռճական), սիրտը մաշել / մաշվել (քերականական), սիրտը կտոր – կտոր անել / լինել (քերականական), սիրտը փլել / փլչել / փլվել / փուլ գալ (քերականական և բառային), սրտին դանակ զարկես / խփես / տաս՝ արյուն չի գա / չի կաթի (բառային), *сердце ноет / шепчет / бьют* (բառային), *сердце / душа надрываётся* (բառային), *рвётся / разрываемь* *сердце* (բառային), *lie (heavy) at sb's heart* (քանակական), *cry one's heart / eyes out* (բառային):

Դիտարկված իմաստային դաշտի դարձվածքների մեջ բազմաթիվ են դարձվածքային հոմանիշները (լայն առումով՝ բոլոր դարձվածքները հոմանիշներ են): Նկատվում են հոմանիշային մի քանի շարքեր, օրինակ՝

• Սիրտը լալ – Սիրտը մխալ – սրտին դանակ խփես՝ արյուն չի գա – Սիրտը արյուն քամել – Սիրտը ցավել – Սիրտը մաշել – Սիրտը կտրատվել – Սիրտը կտոր – կտոր լինել – Սրտի ծերը մղկտալ – Սրտի քիթը մղկտալ – Սիրտը սև – Սիրտը խորովվել – Սիրտը դառնանալ – Սիրտը մրմռալ – Սիրտը կսկծալ – Սիրտը կեղեքվել – Սիրտը տրորվել – Սիրտը կրակ ընկնել – Սրտում դաղ մնալ և այլն:

• Սիրտը էրել – Սիրտը խաշել – Սիրտն արյուն կաթեցնել- Սրտի վրա
 ցստել – Սրտի լարերը կտրել – Սիրտը մորմոքել – Սիրտը կրծել – Սիրտը այրել
 – Սիրտը կրակ գցել – Սրտին իջնել – Սիրտը դառնացնել – Սիրտը ցավեցնել -
 Սիրտը ուտել – Սիրտը քորել – Սրտի ուրորը քանդել- Սիրտը ուրդել – Սրտի
 ճրագը մարել –Սրտի գդալը հալեցնել – Սրտին մանանեխ ցանել- Սրտում
 դոխիք վառել- Սիրտ ու թոքը մաշել – Սրտից արյուն բերել և այլն:

• Ցավոք սրտի – ցավ ի սիրտ – սրտի ցավով:

• Сердце разрывается - Ад кромешный на сердце – Сердце кровью
 обливается–сердце/душа надрывается–Кошки скребут на сердце– Болеет
 сердцем – Рвать сердце – Сердце замирает – Иметь что-л. на сердце.

• Нож в сердце – Берегут сердце – Надрывать сердце

• A bleeding heart – A heavy heart

• Sb's heart bleeds (for sb.) – One's heart breaks – One's heart aches – Sob /
 cry one's heart out – Eat one's heart out – One's heart burns

• Tear sb's heart

• Make sb's heart ache – Lie heavy at sb's heart – Weigh upon sb's heart

Ինչպես նկատում ենք, հայերենի և ռուսերենին առաջին և երկրորդ
 համահիշային շարքերն իրենց ընդհանուր իմաստով գտնվում են հակառակ ձևը²:
 հարաբերության մեջ, քանզի առաջին դեպքում մարդն ինքն է տանջվում
 տառապում որոշ հանգամանքների բերումով, երկրորդ դեպքում նրան, հնչող
 ռավոր է, միտումնավոր տանջում, ցավ ու տառապանք են պատճառում:
 Անգլերենի երկրորդ և երրորդ շարքերը նույնպես գտնվում են հակահիշային
 հարաբերության մեջ:

Տարբեր լեզուների դարձվածքների մեջ հանդիպում են համարժեք
 դարձվածքներ: Դրանցից մի քանիսը իմաստային են, սակայն հանդիպում են
 նաև բաղադրիչային համարժեքներ, ինչպես օրինակ՝ սրտից արյուն է կաթում –
 сердце обливается кровью - one's heart bleed, սիրտը ցավել – сердце болит
 – one's heart aches , սիրտը կտրտվել / կտրատվել / կտոր – կտոր լինել - сердце
 разрывается (на части) – tear sb's heart, սիրտը մղկտում է - сердце ноет,
 սիրտն այրվել – burn one's heart, кошки скребут на сердце – սիրտը տխրել –
 be sick at heart, надрывать сердце – սիրտը մաշեցնել – make sb's heart bleed
 և այլն:

Տարբեր լեզուներում դարձվածքների մեջ առկա համարժեքները վկա-
 յում են այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրու-
 թյունների մասին: Եվ իսկպես, մի՞թե տարբեր ժողովուրդներ չէին կարող
 կատարել միանման վերացարկումներ և ձևավորել համարժեք դարձվածքներ,
 եթե նույնիսկ դրանք արտահայտեին տարբեր կերպ:

Դարձվածքների մեջ քիչ չեն նաև այնպիսիք, որ ունեն ազգային բնույթ, ասել է թե՛ հատուկ են տվյալ ժողովրդի լեզվամտածողությանը: Նման դարձվածքներ են սիրտը մխալ, սիրտը խաշել, սիրտը խորովվել, սիրտը արյուն քամել, սրտի քիթը մկտալ, ցավոք սրտի, սիրտը փուլ գալ, փրտը դառնությամբ լցվել, սիրտը մութ լինել, սիրտը տորոժվել, *ad kromeshnyu na serdce, komku skrebym na serdce, serdce zamuraem, weigh heavy upon sb's heart, eat one's heart out, cry / sob one's heart out* և այլն:

Հայերենի «սիրտը ուտել» և անգլերենի «eat one's heart out» դարձվածքները բաղադրիչային համարժեքներ են. սակայն իմաստային առումով դրանք հակադիր իմաստներ ունեն, քանզի առաջինն ունի «տանջել», մինչդեռ երկրորդը «տանջվել» իմաստը:

Այստեղ չենք անդրադարձել ուսումնասիրված դարձվածքների ոճական առանձնահատկություններին: Նշենք միայն, որ դարձվածքները հիմնականում օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում: Նկատելի է նաև, որ դրանցով չափազանց հարուստ է գեղարվեստական գրականությունը:

բալ,

կառուցվործված գրականության ցանկ

1. Հանգանակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969-1980;
2. Բիսպյան Ս., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
3. Ушин А.В. Англо-русский фразеологический словарь М., 1985.
4. Васьковский Д. И., Русско-английский фразеологический словарь, М., 1998:
5. Фразеологический словарь русского языка, под ред. А.И. Молоткова, М., 1978.
6. Brewer's Dictionary of Phrase and Fable. London, 1956.
7. The Old English Dictionary, vol. 1-12, Oxford University Press, 1961.
8. Սե- Սղայան Ղ., Երկեր, Ե., 1979:
9. Բե- Բակունց Ա., Երկեր, Ե., 1986:
10. Դ- Դեմիրճյան Ղ., Վարդանանք, Ե., 1987:
11. Թ- Թորգոմյան Ծ., Սնունդի Կրակներ, Ե., 1959:
12. Թե- Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 1-10, Ե., 1990-0996:
13. Իե- Խախակյան Ա., Երկերի ժողովածու 6 հատորով, Ե., 1973-1979:
14. Պ- Պռոշյան Պ., Հացի խնդիր, Ե., 1968:
15. ՍԴԵ- Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 1, Ե., 1968:
16. Բե- ԲաճՖի, Երկերի ժողովածու 10 տառորով, հ. I, III, IV, Ե., 1984:
17. ДФУ-Достоевский Ф. М. Униженные и оскорбленные, М., 1971.
18. ДФП- Достоевский Ф. М., Повести, М., 1984.
19. ДФПр-Достоевский Ф. М., Преступление и наказание, М., 1983.
20. ЛМГ- Лермонтов М. Ю., Герой нашего времени, стихи- поэмы, Е., 1984.
21. ТИД- Тургенев И.С., Дворянское гнездо, М., 1952.
22. ВСЖ- Bronte Ch., Jane Eyre. London 1985.
23. СAG- Cronin A. J., The Green Years, GB, 1979
24. САН- Cronin A. J., Hatter's Castle, М., 1963
25. GJL- Galsworthy J., To Let, М., 1953
26. GJS-Galsworthy J., The Silver Spoon, М., 1956
27. MWC- Maugham W. S., Complete Short Stories, v. 1, 4, GB, 1980.
28. TMA- Twain M., The Adventures of Tom Sawyer, М., 1948.